ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

# ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթերթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթերթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթերթում: Պատասխանների ձևաթերթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

Ա մակարդակ

| 1 | Ե՞րբ է կառավարել Աքքադի թագավորության հիմնադիր Սարգոնը. |
|---|---|

1) Ք.ա. 2230-2195 թթ.
2) Ք.ա. 2330-2295 թթ.
3) Ք.ա. 2330-2300 թթ.
4) Ք.ա. 2359-2330 թթ.

| 2 | Ե՞րբ է գահ բարձրացել փարավոն Թութմոս III-ը. |
|---|---|

1) Ք.ա. 1540 թ.
2) Ք.ա. 1450թ.
3) Ք.ա. 1468թ.
4) Ք.ա. 1568թ.

| 3 | Ե՞րբ է տեղի ունեցել Սուասոնի ճակատամարտը. |
|---|---|

1) 486թ.
2) 496թ.
3) 476թ.
4) 466թ.

| 4 | Ե՞րբ է ձևավորվել Գերմանական(Տևտոնական) թագավորությունը. |
|---|---|

1) 936թ.
2) 943 թ.
3) 933թ.
4) 919 թ.

| 5 | Ե՞րբ է Ֆրանսիայի Օրենսդիր ժողովն ընդունել «Հայրենիքը վտանգի մեջ է» օրենքը. |
|---|---|

1) 1792թ.
2) 1789 թ.
3) 1790թ.
4) 1791թ.

| 6 | Ե՞րբ է սկսվել քաղաքացիական պատերազմը Իսպանիայում. |
|---|---|

1) 1936թ.
2) 1940թ.
3) 1939թ.
4) 1937թ.

| 7 | Ե՞րբ է Ֆրանսիան դուրս եկել ՆԱՏՕ-ի ռազմական կառույցից. |
|---|---|

1) 1969թ.
2) 1966թ.
3) 2002թ.
4) 1990թ



| 80 | Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ. |
|---|---|

1. Հայաստանի Հանրապետության անդամակցելը Եվրոպայի խորհրդին
2. Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ
3. Ազատական-ժողովրդավարական վարչակարգի հաստատումը Չեխոսլովակիայում
4. Եվրոպայի խորհրդի ստեղծումը
5. Դ. Մեդվեդևի Ռուսաստանի Դաշնության նախագահ ընտրվելը

ա. 1990թ.
բ. 2008թ.
գ. 2001թ.
դ. 1949թ.
ե. 1989թ.
զ. 2007թ.

1) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ, 5-բ
2) 1-ա, 2-գ, 3-ե, 4-դ, 5-զ
3) 1-գ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-զ
4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ե, 5-ա

78 **Կատարել համապատասխանեցում.**

1. Լեոնարդո դա Վինչի
2. Անդրեյ Ռուբլյով
3. Ռաֆայել Սանտի
4. Ալբրեխտ Դյուրեր
5. Ռեմբրանդտ

ա. «Անառակ որդու վերադարձը»
բ. «Սիքստինյան Տիրամայրը»
գ. «Երրորդություն»
դ. «Ջոկոնդա»
ե. «Տիրակալը»
զ. «Ինքնանկար»

1) 1-զ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-ե
2) 1-զ, 2-ե, 3-ա, 4-բ, 5-դ
3) 1-ե, 2-ա, 3-զ, 4-գ, 5-բ
4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-զ, 5-ա

79 **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Վայրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ազատական սահմանադրության ընդունումը Բուլղարիայում | 1. | 1916թ. | 1. | Հիջազ |
| 2. | Սահմանադրության ընդունելու և մեջլիս հրավիրելու շահական հրովարտակի հրապարակումը | 2. | 1891 թ. | 2. | Տիռնովո |
| 3. | Արաբների հակաթուրքական զինված ապստամբությունը | 3. | 1905 թ. | 3. | Բեռն |
| 4. | Խաղաղության միջազգային բյուրոյի ստեղծումը | 4. | 1879 թ. | 4. | Թեհրան |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 2 |
| 2 | 2 | 4 |
| 3 | 1 | 3 |
| 4 | 3 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 2 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 1 | 1 |
| 4 | 2 | 3 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 3 |
| 2 | 4 | 2 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 1 | 1 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 3 | 2 |



8 **Ովքե՞ր էին Հարավային Միջագետքի հնագույն բնակիչները.**

1) խուռիները
2) շումերները
3) կասիտները
4) կուտիները

9 **Ո՞ր քաղաքի տիրակալը Միջագետքից վտարեց կուտիներին.**

1) Ուր
2) Ումմա
3) Քիշ
4) Ուրուկ

10 **Ինչպե՞ս էր կոչվում Ֆրանկական պետության դատաստանագիրքը.**

1) Մերովինգյան դատաստանագիրք
2) Պիպինյան դատաստանագիրք
3) Սալիական դատաստանագիրք
4) Կարոլինգյան դատաստանագիրք

11 **Ո՞վ էր Երկրորդ կայսրության հիմնադիրը Ֆրանսիայում.**

1) Նապոլեոն III-ը
2) Կարլոս I-ը
3) Ռոբեսպիերը
4) Նապոլեոն I-ը

12 **Որտե՞ղ է տեղի ունեցել Գերմանական կայսրության հռչակումը.**

1) Բեռլինում
2) Վերսալում
3) Վիեննայում
4) Ստրասբուրգում

13 **Քանի՞ պետություններ են ստորագրել Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծման մասին պայմանագիրը.**

1) 10
2) 12
3) 21
4) 17

14 **Ինչպե՞ս է բնութագրել XX դարը ամերիկացի հասարակագետ ու աստվածաբան Ֆ. Լիքը.**

1) «Ցեղասպանության դարաշրջան»
2) «Գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջան»
3) «Բարդ տեխնոլոգիաների դարաշրջան»
4) «Անիշխանության դարաշրջան»

15 **Ովքե՞ր էին էվպատրիդները.**

1) Սպարտայի զինված ուժերի գերագույն հրամանատարությունը
2) տոհմային ավագանու ներկայացուցիչներն Աթենքում
3) Սպարտայի Ժողովրդական ժողովի անդամները
4) քրմական դասի ներկայացուցիչներն Աթենքում

16 **Ո՞րն է «ինտեգրացիա» տերմինի բացատրությունը.**

1) ապրանքային տնտեսության պահանջարկի և առաջարկի օրենքների հիման վրա զարգացող տնտեսություն
2) տնտեսական կյանքի միջազգայնացման,միասնացման նոր բարձրագույն ձև
3) հասարակական կյանքի վերափոխություն,վերադասավորություն
4) գիտության և տեխնիկայի լայնածավալ արմատական առաջընթաց

17 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Փարավոն Յահմոս I-ի գահակալման սկիզբը
բ. Մինայի կողմից Եգիպտոսի Վաղ թագավորության հիմնումը
գ. համաեգիպտական XI հարստության հիմնումը
դ. Եգիպտոսի Հին թագավորության դարաշրջանի սկիզբը

1) ա,գ,դ,բ
2) դ,բ,ա,գ
3) գ,ա,բ,դ
4) բ,դ,գ,ա

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կոնրադ I Ֆրանկոնացու թագավոր ընտրվելը
բ. Պիպին Կարճահասակի թագադրվելը
գ. Կարլոս Մեծի կողմից Սաքսոնիայի նվաճման ավարտը
դ. Ֆրանկական թագավորության առաջացումը

1) բ,ա,գ,դ
2) դ,բ,գ,ա
3) գ,ա,դ,բ
4) բ,դ,ա,գ

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. հունգարական հեղափոխության ճնշումը
բ. անգլո-իրանական հակամարտությունը Հերաթի համար
գ. Հռոմի պապի աշխարհիկ իշխանության վերացումը
դ. «Մարդու և քաղաքացու իրավունքների» հռչակագրի ընդունումը Ֆրանսիայի Սահմանադիր ժողովի կողմից

1) բ,ա,դ,գ
2) գ,ա,դ,բ
3) դ,բ,ա,գ
4) բ,դ,գ,ա



76 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «Մյունխենյան գործարք»
բ. Խորհրդա-գերմանական չհարձակման համաձայնագիրը
գ. Վերսալի պայմանագիրը
դ. Ստալինգրադի ճակատամարտը
ե. Աբխազիայի անկախության հռչակումը
զ. Ռուս-վրացական պատերազմը
է. Ածխի և պողպատի եվրոպական միավորման ստեղծումը
ը. Վարշավյան պայմանագրի լուծարումը
թ. Ջ. Քենեդու սպանությունը
ժ. Գ. Բրաունի կառավարության ձևավորումը Մեծ Բրիտանիայում

1) դ,ա,գ,բ,զ,ե,թ,ժ,է,ը
2) գ,ա,բ,դ,է,թ,ե,ը,ժ,զ
3) ա,գ,դ,բ,թ,է,ժ,զ,ը,ե
4) գ,ա,թ,ժ,ե,ը,զ,բ,է,դ

77 **Մշակույթի գործիչներին համապատասխանեցնել արվեստի ուղղությունների հետ.**

1. Օ. դը Բալզակ
2. Է. Դեգա
3. Պ. Ռուբենս
4. Ֆ. Շոպեն
5. Ժ. Լուի Դավիդ

ա. բարոկկո
բ. սիմվոլիզմ
գ. ռեալիզմ
դ. իմպրեսիոնիզմ
ե. ռոմանտիզմ
զ. կլասիցիզմ

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-զ
2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա, 5-ե
3) 1-ա, 2-զ, 3-դ, 4-բ, 5-գ
4) 1-բ, 2-ե, 3-զ, 4-դ, 5-ա

73 **Նշված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Երեսնամյա պատերազմի հետևանք.**

ա. Խիստ մեծացավ Ֆրանսիայի քաղաքական հեղինակությունը:
բ. Միջազգայնորեն ճանաչվեց Լիվոնյան պետությունը:
գ. Միջազգային ճանաչում ստացան Շվեյցարական միությունը և Նիդեռլանդները(Հոլանդիա):
դ. Ավարտվեց Գերմանիայի քաղաքական միավորումը:
ե. Վեստֆալյան պայմանագրով օրինականացվեց Գերմանիայի քաղաքական և դավանաբանական մասնատվածությունը:
զ. Ռուսաստանը վերջնականապես ամրապնդվեց Սև ծովի հյուսիսային ափերին:

1) բ,դ,զ
2) ա,գ,ե
3) ա,դ,զ
4) գ,դ,ե

74 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք համարվում են ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքներ.**

ա. ավելի զորեղ ու հաստատուն Եվրոմիության ստեղծում
բ. նորանկախ պետությունների մեծ մասի բնակչության կենսամակարդակի աճ
գ. ՆԱՏՕ-ի ընդլայնում
դ. Ռուսաստանի գլխավորությամբ միաբևեռ աշխարհակարգի ստեղծում
ե. քաղաքական իսլամի ակտիվացում
զ. Սառը պատերազմի ընթացքում երրորդ աշխարհում տեղ գտած մի շարք պատերազմների ավարտ
է. բնակչության արտագաղթի նվազում

1) ա,գ,է,ե
2) բ,դ,զ,է
3) ա,գ,ե,զ
4) բ,գ,դ,ե

75 **Պատմական գործիչներին դասավորել ըստ գործունեության ժամանակագրական հաջորդականության.**

ա. Ալկիվիադես
բ. Ներոն
գ. Կլիսթենես
դ. Դեմոսթենես
ե. Սելևկոս
զ. Գայոս Մարիոս
է. Օգոստոս
ը. Պերիկլես
թ. Թեմիստոկլես
ժ. Փիլիպոս II

1) ե,ա,ը,դ,գ,զ,բ,ժ,թ,է
2) դ,է,ա,բ,գ,զ,ժ,ը,թ,ե
3) գ,թ,ը,դ,ա,ժ,ե,զ,է,բ
4) ա,ե,գ,ժ,բ,ը,դ,զ,է,թ



20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Թուրքիայի Հանրապետության հռչակումը
բ. Անգլո-իրանական համաձայնագրի ստորագրումը
գ. զինված ապստամբությունը շեյխ Մուհամադ Խիաբանու գլխավորությամբ
դ. Սայքս-Պիկոյի համաձայնագիրը

1) գ,բ,դ,ա
2) դ,բ,գ,ա
3) դ,բ,ա,գ
4) բ,ա,գ,դ

21 **Ե՞րբ է պարսկական բանակը Կյուրոսի գլխավորությամբ ներխուժել Բաբելոնիա.**

1) Ք.ա. 539թ.
2) Ք.ա. 529թ.
3) Ք.ա. 549թ.
4) Ք.ա. 559թ

22 **Ե՞րբ է ստորագրվել Վորմսի համաձայնագիրը.**

1) 1122թ.
2) 1106թ.
3) 1222թ.
4) 1206թ.

23 **Ե՞րբ է տեղի ունեցել Չուդ լճի ճակատամարտը.**

1) 1232թ.
2) 1240թ.
3) 1242թ.
4) 1244թ.

24 **Ե՞րբ է Հունաստանը ճանաչվել անկախ թագավորություն.**

1) 1823թ.
2) 1830թ.
3) 1828թ.
4) 1825թ.

25 **Ե՞րբ է ընդունվել «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան.**

1) 1955թ.
2) 1948թ.
3) 1946թ.
4) 1949թ.

26 **Ո՞վ է Նոր Բաբելոնյան տերության հիմնադիրը.**

1) Նաբուգոդոնոսորը
2) Նաբոնիդը
3) Սարգոնը
4) Նաբոպալասարը

27 **Որտե՞ղ է Հռոմի պապից թողություն ստացել կայսր Հենրիխ IV-ը.**

1) Հռոմում
2) Կանոսայում
3) Միլանում
4) Վորմսում

28 **Ո՞ր գործիչն է VI դարում ստեղծել «Գոթերի պատմության» կրճատ տարբերակը.**

1) Կասիոդորը
2) Բոեցիոսը
3) Յորդանը
4) Վուլֆիլը

29 **Ո՞ր տերության օգնությամբ Հաբսբուրգներին հաջողվեց ճնշել հունգարական հեղափոխությունը.**

1) Պրուսիայի
2) Ռուսաստանի
3) Ֆրանսիայի
4) Օսմանյան կայսրության

30 **Որտե՞ղ է ստորագրվել Դեյթոնյան խաղաղության համաձայնագիրը.**

1) Դեյթոնում
2) Կոսովոյում
3) Ռամբույեում
4) Փարիզում

31 **Ի՞նչ հետևանքներ ունեցան գալլական ցեղերի մշտական ներխուժումները Կենտրոնական Իտալիա.**

1) Հռոմը ստիպված էր ռազմական դաշինքներ կնքել էտրուսկների և Իտալիայի այլ միությունների հետ:
2) Հռոմը գրավվեց և ամայացվեց գալլերի կողմից:
3) Իտալիայի հարավը նվաճվեց հյուսիսաֆրիկյան Կարթագեն քաղաքի կողմից:
4) Իտալիկյան ցեղերը հարկադրված էին գաղթել այլ երկրներ:

32 **Ո՞րն է 732թ. Պուատիեի ճակատամարտի գլխավոր հետևանքը.**

1) Կանգնեցվեցին արաբների արշավանքները Արևմտյան Եվրոպա:
2) Արաբները նվաճեցին ողջ Հարավային Գալլիան:
3) Արաբներից ազատագրվեց Պիրենեյան թերակղզին:
4) Ստեղծվեց հզոր Ֆրանկական կայսրությունը:



71 **Նշված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. բացարձակ միապետություն
2. պահպանողականություն
3. սահմանադրական միապետություն
4. «նոր ազատություն»
5. ավտորիտար կառավարում

ա. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը
բ. XVII-XVIIIդդ. հեղափոխության և լուսավորականության հակազդեցությամբ ձևավորված քաղաքական գաղափարախոսություն
գ. կառավարման ձև, երբ միապետի անձնական իշխանությունը ոչնչով չի սահմանափակվում
դ. կառավարման ձև, երբ հասարակությունը պետք է ենթարկվի միապետի կամքին
ե. ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների ծրագիրը
զ. կառավարման ձև, երբ սահմանափակվում են կայսեր իշխանությունն ու իրավունքները

1) 1-գ, 2-զ, 3-բ, 4-ե, 5-ա
2) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ա, 5-դ
3) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-գ
4) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-զ

72 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. ինքնիշխանություն
2. գերիշխանություն
3. բռնապետություն
4. ամբողջատիրություն
5. միասնացում

ա. տնտեսական կյանքի միջազգայնացման, միասնացման նոր, բարձրագույն ձև
բ. պետության անկախ, ինքնուրույն լինելը արտաքին և ներքին գործերում
գ. բռնապետական իշխանության ձև
դ. քաղաքական համակարգ, որին բնորոշ են կառավարման ոչ ժողովրդավարական մեթոդները
ե. որևէ պետության, քաղաքական ուժի կամ միության ղեկավար, գերիշխող դերը մյուսների նկատմամբ
զ. արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնականացման գործընթաց

1) 1-բ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա
2) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ, 5-բ
3) 1-ա, 2-գ, 3-ե, 4-դ, 5-բ
4) 1-բ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-զ

**69** **Բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք տեղ են գտել Ֆուլտոնում հնչած Ու. Չերչիլի ելույթում.**

ա. Մեծածավալ տնտեսական օգնություն տրամադրել եվրոպական երկրներին:
բ. Ստեղծել արևմտյան երկրների ռազմաքաղաքական խմբավորում Անգլիայի հովանու ներքո:
գ. ԽՍՀՄ-ի դեմ օգտագործել ատոմային զենքի սպառնալիքը, նույնիսկ կիրառել այն:
դ. Եվրոպայի վրա իջել է երկաթե վարագույրը, իսկ Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի պետությունները և ժողովուրդներն ընկել են «Մոսկվայի վերահսկողության տակ»:
ե. ԽՍՀՄ-ի սահմանագծի երկայնքով տեղակայել ամերիկյան ռազմակայաններ:
զ. Միավորել ամբողջ անգլոսաքսոնական աշխարհի ուժերը:
է. Կոմունիստական կուսակցությունների աճող սպառնալիք են «քրիստոնեական քաղաքակրթությանը»:

1) գ,ե,զ,է
2) ա,բ,դ,ե
3) գ,դ,զ,է
4) բ,գ,դ,ե

**70** **Տալ նշված տերմինների բացատրությունը.**

1. օստրակիզմ
2. տիրանիա
3. պլեբեյներ
4. կոմիցիաներ
5. դիադոխներ

ա. Ժողովրդական ժողով Հին Հռոմում
բ. Ալեքսանդր Մակեդոնացու տերության ժառանգորդներ
գ. միանձնյա կառավարման ժամանակավոր եղանակ Հին Հունաստանում
դ. Ժողովրդական ժողով Աթենքում
ե. պետության համար վտանգավոր քաղաքացիների վտարման կարգ Ատտիկայում
զ. Հին Հռոմի բնակչության այն հատվածը, որը զուրկ էր քաղաքացիական իրավունքներից

1) 1-ե, 2-գ, 3-զ, 4-ա, 5-բ
2) 1-ե, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ա
3) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-զ
4) 1-դ, 2-ա, 3-զ, 4-գ, 5-ե



**33** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Ուրուկի կառավարիչ Ուտուխեգալի կողմից կուտիների վտարումը Միջագետքից
բ. սեմալեզու ցեղերի ներթափանցման սկիզբը Միջագետք
գ. ամորեական ցեղերի հաստատվելը Միջագետքի տարածքում
դ. Աքքադի արքա Սարգոնի գահակալման սկիզբը

1) ա,գ,դ,բ
2) դ,ա,բ,գ
3) բ,ա,գ,դ
4) բ,դ,ա,գ

**34** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Բալկանյան երկրորդ պատերազմը
բ. Եգիպտոսի գրավումը անգլիացիների կողմից
գ. Պանամայի անջատումը Կոլումբիայից
դ. ֆրանս-անգլիական «սրտագին համաձայնության» կնքումը
ե. Կուբայի անկախության հռչակումը

1) ե,բ,գ,դ,ա
2) բ,ե,գ,դ,ա
3) գ,ա,ե,դ,բ
4) դ,բ,գ,ա,ե

**35** **Ո՞ր երկրում է Ռեֆորմացիայի արդյունքում հաստատվել հետևյալ սկզբունքը. «Ում իշխանությունը,նրա էլ՝ հավատը»:**

1) Անգլիայում
2) Գերմանիայում
3) Իսպանիայում
4) Ֆրանսիայում

**36** **Ո՞ր պետությունում էր տարածված հետևյալ ասույթը.«Թագավորն իշխում է,բայց չի կառավարում»:**

1) Գերմանիայում
2) Ֆրանսիայում
3) Ավստրո-Հունգարիայում
4) Մեծ Բրիտանիայում

| 37 | **Կատարել համապատասխանեցում.** |
|---|---|

1. Ռամզես II
2. Սարգոն
3. Թիգլաթպալասար I
4. Համմուրապի
5. Սալմանասար I

ա. Ք.ա. 1114-1076 թթ.
բ. Ք.ա. 1792-1750 թթ.
գ. Ք.ա. 1279-1213 թթ.
դ. Ք.ա. 1263-1234 թթ.
ե. Ք.ա. 1233-1177 թթ.
զ. Ք.ա. 2330-2295թթ.

1) 1-ե, 2-ա, 3-դ, 4-զ, 5-բ
2) 1-գ, 2-զ, 3-ա, 4-բ, 5-դ
3) 1-գ, 2-զ, 3-ե, 4-դ, 5-ա
4) 1-բ, 2-դ, 3-զ, 4-գ, 5-ե

| 38 | **Համապատասխանեցնել մշակույթի գործիչների անունները այն երկրների հետ,որտեղ ստեղծագործել են.** |
|---|---|

1. Ա. Դեյնեկա
2. Գ. Սևերինի
3. Դ. Ռիվերա
4. Ժ. Պ. Սարտր
5. Հ. Իբսեն

ա. Ֆրանսիա
բ. Նորվեգիա
գ. Իտալիա
դ. Մեքսիկա
ե. ԽՍՀՄ
զ. Իսպանիա

1) 1-ե, 2-գ, 3-դ, 4-ա, 5-բ
2) 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ, 5-դ
3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա, 5-ե
4) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ, 5-զ

| 39 | **Ինչպե՞ս էր կոչվում հիքսոսների հիմնած մայրաքաղաքը Եգիպտոսում.** |
|---|---|

1) Թեբե
2) Հերակլեոպոլիս
3) Ավարիս
4) Մեմֆիս

| 40 | **Ու՞մ կողմից է շրջանառության մեջ դրվել «Նոր աշխարհակարգ» հասկացությունը.** |
|---|---|

1) Ջորջ Բուշ Ավագի
2) Ջորջ Բուշ Կրտսերի
3) Բիլ Քլինթոնի
4) Ռոնալդ Ռեյգանի



| 67 | **Նշված պնդումներից որո՞նք են սխալ.** |
|---|---|

ա. Եգիպտոսում նոմերի մշտական պայքարն ի վերջո ավարտվեց Ք.ա. XXXIIIդ.՝ միացյալ Եգիպտական թագավորության ստեղծումով:
բ. Եգիպտոսի Վաղ թագավորության հիմնադիր փարավոն Մինան կառուցել է Մեմֆիս մայրաքաղաքը:
գ. Եգիպտոսի Հին թագավորության վերջում երկիրը նվաճեցին արտաքին թշնամիները՝ հիքսոսները:
դ. ՓարավոնԱմենհոտեպ IV-ի կրոնական վերափոխումների արդյունքում Եգիպտական դիցարան գլխավոր աստված հռչակվեց Ամոնը:
ե. Փարավոն Թութմոս III-ի և խեթական արքա Խաթուսիլիս III-ի միջև կնքված պայմանագրով կողմերը պարտավորվում էին վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով:
զ. Հիքսոսներին Եգիպտոսից վտարել են XVIII հարստության հիմնադիր Յահմոս I-ը:
է. Եգիպտոսի Ուշ թագավորության դարաշրջանը հայտնի է որպես օտարների տիրապետության ժամանակաշրջան:

1) բ,դ,զ,է
2) ա,գ,դ,ե
3) գ,դ,ե,զ
4) ա,դ,զ,է

| 68 | **Նշված պնդումներից ո՞րոնք են ճիշտ.** |
|---|---|

ա. Բուլղարերեն առաջին դասագիրքը հրատարակվել է 1824թ.:
բ. 1830թ. եվրոպական տերությունները ճանաչեցին Սերբիայի անկախությունը:
գ. Ռումինիայի միացյալ իշխանությունը ձևավորվել է 1859-1862թթ. ընթացքում՝ Վալախիայի և Մոլդովայի միավորումով:
դ. Բուլղարիան վերջնական անկախություն ստացավ 1885թ.:
ե. Ալբանիան անկախ է հռչակվել և ճանաչվել տերությունների կողմից 1912-1913թթ.:
զ. Ռումինիան թագավորություն է հռչակվել 1881թ.:
է. 1879թ. Տիրնովոյում ընդունված սահմանադրությամբ Բուլղարիան հռչակվել է հանրապետություն:

1) գ,ե,զ,է
2) բ,դ,ե,է
3) բ,դ,զ,է
4) ա,գ,ե,զ

65 Կատարել համապատասխանեցում.

| # | Իրադարձությունը | # | Գործիչը | # | Տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1. | պայմանագրի կնքումը Եգիպտոսի և Խեթական տերության միջև | 1. | Ուտեխեգալ | 1. | Ք.ա. 201թ. |
| 2. | կուտիների վտարումը Միջագետքից | 2. | Փիլիպոս V | 2. | Ք.ա. 525թ. |
| 3. | Աքեմենյան Պարսկաստանի կողմից Եգիպտոսի նվաճումը | 3. | Խաթուսիլիս III | 3. | Ք.ա. 2109թ. |
| 4. | մակեդոնական նավատորմի պարտությունը Քիոսի մոտ | 4. | Կամբիզ | 4. | Ք.ա. 1259թ. |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 4 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 2 |
| 4 | 2 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 2 |
| 2 | 2 | 4 |
| 3 | 1 | 3 |
| 4 | 3 | 1 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 3 | 2 |
| 4 | 1 | 4 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 2 | 4 |

66 Կատարել համապատասխանեցում.

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Վայրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Բարդուղիմեոսյան գիշերը | 1. | 800 թ. | 1. | Հռոմ |
| 2. | Խաչակրաց արշավանքները խթանած եկեղեցական ժողովը | 2. | 1572 թ. | 2. | Մոսկվա |
| 3. | Կարլոս Մեծի կայսր թագադրվելը | 3. | 1598 թ. | 3. | Փարիզ |
| 4. | Ռոմանովների արքայատոհմի հաստատումը | 4. | 1095 թ. | 4. | Կլերմոն |
| | | 5. | 1613թ. | 5. | Վորմս |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 4 | 2 |
| 4 | 3 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 5 | 4 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 2 | 5 |
| 4 | 3 | 2 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 4 | 4 |
| 3 | 1 | 1 |
| 4 | 5 | 2 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 5 |
| 2 | 2 | 3 |
| 3 | 4 | 2 |
| 4 | 3 | 1 |



41 Ո՞րն է Եվրոպայում լուսավորական շարժման գլխավոր հետևանքը.

1) գաղութային համակարգի փլուզումը
2) պետականության ազատական-սահմանադրական կարգի հաստատումը
3) միապետական իշխանության «աստվածային» ծագման հիմնավորումը
4) Արևելքի երկրներում քրիստոնեության լայն տարածումը

42 Նշվածներից ո՞րն է հետպատերազմյան Իտալիայի ամերիկամետ դիրքորոշման պատճառը.

1) ներքաղաքական ճգնաժամը
2) ԽՍՀՄ-ի միջամտությունը Իտալիայի ներքին գործերին
3) տնտեսական և ֆինանսական խոշոր աջակցության կարիքը
4) աշխարհում կոմունիստական տիրապետության հաստատման կանխարգելումը

43 Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Բարդիայի ապստամբությունը Կամբիզի դեմ
բ. Նաբոպալասարի թագադրվելը Բաբելոնիայի արքա
գ. Թիգլաթպալասար I-ի գահակալումը
դ. Բաբելոնի գրավումը Կյուրոսի կողմից
ե. Սարգոն II-ի զոհվելը

1) դ,ա,ե,բ,գ
2) բ,ե,դ,գ,ա
3) գ,ե,բ,դ,ա
4) ե,բ,գ,ա,դ

44 Եկեղեցական գործիչներին դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. Գրիգորիոս VII
բ. Իսիդոր Սևիլիացի
գ. Գրիգորիոս Տուրացի
դ. Մարկիանոս Կապելա
ե. Լևոն III

1) բ,ե,ա,գ,դ
2) ե,բ,ա,դ,գ
3) դ,գ,բ,ե,ա
4) ա,դ,ե,գ,բ

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Աբխազիայի անկախության հռչակումը
բ. Շառլ դը Գոլի հեռանալը քաղաքական ասպարեզից
գ. Էլիզաբեթ II-ի գահ բարձրանալը
դ. Մ. Թետչերի առաջին անգամ վարչապետի պաշտոն ստանձնելը
ե. Ջ. Քենեդու նախագահ ընտրվելը

1) գ,ե,բ,դ,ա
2) դ,ե,բ,գ,ա
3) բ,գ,ե,ա,դ
4) գ,բ,ե,դ,ա

46 **Կատարել համապատասխանեցում.**

1. Շուլգի
2. Նարամսին
3. Կուրիգալզու I
4. Լաբարնա I

ա. Ասորեստանի արքա
բ. Կուսսար քաղաքի տիրակալ
գ. Ուրի III հարստության արքա
դ. Աքքադի արքա
ե. Կուտիների արքա

1) 1-ա, 2-ե, 3-գ, 4-դ
2) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե
4) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ

47 **Կատարել համապատասխանեցում.**

1. «Գոթերի պատմությունը»
2. «Իլիական»
3. «Արևի քաղաքը»
4. «Աշխատանք և օրեր»
5. «Անցած տարիների պատմությունը»

ա. Հոմերոս
բ. Նեստոր
գ. Կասիոդոր
դ. Կամպանելլա
ե. Հեսիոդոս
զ. Վերգիլիոս

1) 1-զ, 2-բ, 3-ե, 4-գ, 5-ա
2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ
3) 1-ա, 2-զ, 3-բ, 4-գ, 5-դ
4) 1-դ, 2-ե, 3-գ, 4-զ, 5-բ



62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Սայքս - Պիկոյի գաղտնի համաձայնագիրը
բ. Երկրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
գ. Վիեննայի վեհաժողովի ավարտը
դ. Ռուսաստանի Հայրենական պատերազմը
ե. Վուդրո Վիլսոնի նախագահ ընտրվելը
զ. Սերբիան որպես ինքնավար ժառանգական իշխանության ճանաչումը սուլթանի կողմից
է. Ռումինիայի ստեղծումը
ը. ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Հաագայում հրավիրված պետությունների համաժողովը
թ. ԱՄՆ-ի առաջին աշխարհամարտին մասնակցության սկիզբը
ժ. համաձայնագիր Ավստրո-Հունգարիայի ստեղծման մասին

1) դ,գ,զ,բ,է,ժ,ը,ե,ա,թ
2) գ,դ,ա,ե,բ,է,զ,ը,թ,ժ
3) ը,ա,գ,զ,դ,ե,ժ,թ,բ,է
4) է,դ,ժ,բ,ա,զ,գ,թ,ը,ե

63 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Եթե ձեր հարևանն իր տանը փոխում է պաստառները, ապա դա չի նշանակում, որ դուք էլ պարտադիր կերպով ձեր տանը պետք է վերանորոգում սկսեք»:**

1) Ն. Սարկոզի
2) Է. Հոնեկեր
3) Ս. Բեռլուսկոնի
4) Ի. Բրոզ Տիտո

64 **Ու՞մ են պատկանում հետևյալ խոսքերը.«Քաղաքականությունը նույնքան գրավիչ է, որքան պատերազմը: Պատերազմում քեզ կարող են սպանել մեկ անգամ, իսկ քաղաքականության մեջ՝ բազմիցս»:**

1) Ու. Չերչիլ
2) Վ. Վիլսոն
3) Ֆ. Ռուզվելտ
4) Ա. Հիտլեր

**59** **Բերված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի դերի բարձրացման հետևանք.**

ա. Սկիզբ դրվեց չեզոքության քաղաքականությանը:
բ. ԱՄՆ-ի ռազմական հենակայանների թիվը հասավ 500-ի:
գ. Ամերիկյան զորքերը տեղաբաշխվեցին Գերմանիայում, Ճապոնիայում, Իտալիայում և այլ երկրներում:
դ. ԱՄՆ-ը ստանձնում էր «համաշխարհային պատասխանատվությունը»:
ե. Դադարեցվեց կոմունիստների հետապնդումը:
զ. Դադարեցվեց սպառազինությունների մրցավազքը:
է. ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև կնքվեց բարեկամության և փոխադարձ օգնության պայմանագիր:

1) դ,ե,զ
2) ա,գ,զ
3) բ,գ,դ
4) ա,դ,է

**60** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Թերմոպիլյան կիրճի ճակատամարտը
բ. Էտրուսկյան Վոլսինիում քաղաքի նվաճումը հռոմեացիների կողմից
գ. հույն-պարսկական պատերազմների ավարտը
դ. Նիկիասի հաշտությունը
ե. Մարաթոնի ճակատամարտը
զ. հունական նավատորմի հաղթանակը Միկալե հրվանդանի մոտ

1) զ,ե,ա,բ,գ,դ
2) ե,ա,զ,գ,դ,բ
3) գ,ա,զ,ե,բ,դ
4) բ,ե,գ,դ,ա,զ

**61** **Աշխարհիկ և հոգևոր գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակաշրջանի.**

ա. Բոեցիոս
բ. Հենրիխ I
գ. Լենկ Թեմուր
դ. Գրիգորիոս VII
ե. Վուլֆիլ
զ. Բարսեղ (Վասիլ) I
է. Ֆիլիպ II Օգոստոս
ը. Թովմա Աքվինացի
թ. Կարլոս Մարտել
ժ. Վլադիմիր

1) բ,ժ,ա,դ,է,թ,զ,գ,ը,ե,
2) ե,ա,թ,զ,բ,ժ,դ,է,ը,գ
3) է,ա,բ,թ,ե,ժ,զ,ը,գ,դ
4) դ,ե,ժ,ը,թ,բ,ա,գ,զ,է



**48** **Կատարել համապատասխանեցում.**

1. Երկրորդ հանրապետությունը Ֆրանսիայում
2. Թանզիմաթի ժամանակաշրջանը Օսմանյան կայսրությունում
3. Դիրեկտորիայի կառավարման շրջանը Ֆրանսիայում
4. Առաջին կայսրությունը Ֆրանսիայում

ա.1839-1876թթ.
բ. 1848-1852 թթ.
գ. 1804-1814 թթ.
դ. 1795-1799 թթ.
ե. 1852-1870 թթ.

1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
2) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ
3) 1-ա, 2-ե, 3-բ, 4-դ
4) 1-գ, 2-բ, 3-ա, 4-ե

**49** **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. քաղաքացիական պատերազմը Իսպանիայում
2. Իտալիայի դուրս գալը Ազգերի լիգայից
3. Գերմանիայի դուրս գալը Ազգերի լիգայից
4. իտալական բանակի ներխուժումը Եթովպիա

ա. 1939թ.
բ. 1933թ.
գ. 1936թ.
դ. 1935թ.
ե. 1937թ.

1) 1-գ, 2-ե, 3-բ, 4-դ
2) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ
3) 1-գ, 2-ե, 3-դ, 4-բ
4) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ

**50** **Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել նրանց կառավարման տարեթվերի հետ.**

1. Ռ. Նիքսոն
2. Ժ. Շիրակ
3. Բ. Ելցին
4. Ֆ. Ռուզվելտ
5. Վ. Պուտին

ա. 1990-1998 թթ.
բ. 1933-1945 թթ.
գ. 2000-2008 թթ.
դ. 1991-1999 թթ.
ե. 1995-2007 թթ.
զ. 1969-1974 թթ.

1) 1-զ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-բ
2) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-զ
3) 1-զ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-գ
4) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-դ

## Բ մակարդակ

**51** **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Հունական գաղութացումը սկսվել է Ք.ա. IX դարում:
2) Սպարտայում իրական իշխանությունը գտնվում էր 30 հոգուց բաղկացած ավագների խորհրդի ձեռքում:
3) Ճակատամարտը Միկալեի հրվանդանի մոտ տեղի է ունեցել Ք.ա. 480 թվականին:
4) «Երկար պարիսպները» կառուցվել են Թեմիստոկլեսի կողմից՝ պաշտպանելու Աթենքը պարսկական նավատորմի հարձակումներից:

**52** **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) 732թ. Պուատիեի մոտ մայորդոմ Պիպին Կարճահասակը ջախջախեց արաբներին:
2) Վերդենի 743թ. դաշնագրով կայսերական տիտղոսն անցնելու էր Կարլոս Մեծի թոռ Լյուդովիկոս Գերմանացուն:
3) Սրբազան հռոմեական կայսրության առաջին կայսրն էր Օտտոն I-ը:
4) Հենրիխ IV կայսեր պահանջով Հռոմի պապ Գրիգորիոս VII-ը ստիպված էր հրաժարական տալ:

**53** **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) 1941-1942թթ. Իրանի տարածքը ռազմակալեցին խորհրդային, անգլիական և ամերիկյան զորքերը:
2) 1920թ. սկզբին Սիրիայի արևմուտքը ռազմակալվեց ֆրանսիական ուժերի կողմից:
3) 1939թ. մարդահամարի տվյալներով քաղաքային բնակչությունը ԽՍՀՄ-ում կազմում էր 60 մլն. մարդ:
4) 1928թ. Ֆրանսիայում նախկին ճակատայիններից ստեղծվեց ֆաշիստների ռազմականացված մի կազմակերպություն՝ «Մարտական խաչերը»:

**54** **Ի՞նչ է ապելլան.**

1) ավագների խորհուրդ Հին Աթենքում
2) գերագույն օրենսդիր մարմին Հին Հռոմում
3) Ժողովրդական ժողով Հին Սպարտայում
4) դատարան Հին Հռոմում

**55** **Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. բենեֆիցիում
2. մայորդոմ
3. ինկվիզիցիա
4. խորհրդարան

ա. դասային ներկայացուցչական մարմին միջնադարյան Անգլիայում
բ. նախապես՝ թագավորական կալվածքների կառավարիչ Ֆրանկական պետությունում
գ. դասային ներկայացուցչական մարմին միջնադարյան Ֆրանսիայում
դ. հերետիկոսական գաղափարների հավատաքննությունն իրականացնող դատարան
ե. ծառայության դիմաց ցմահ տրվող կալվածք

1) 1-ե, 2-դ, 3-բ, 4-գ
2) 1-ա, 2-ե, 3-գ, 4-բ
3) 1-ե, 2-բ, 3-դ, 4-ա
4) 1-գ, 2-ա, 3-ե, 4-դ



**56** **Տրված հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. Ազատությունների մեծ հրովարտակ
2. մուլք
3. գիլդիական դպրոց
4. վեչե
5. Հանզա

ա. եկեղեցու իրավասության տակ գտնվող միջնադարյան դպրոց
բ. գերմանական և արևմտասլավոնական քաղաքների վաճառականների միություն
գ. մասնավոր սեփականություն համարվող հողեր
դ. 63 հոդված պարունակող միջնադարյան Սահմանադրություն
ե. ժողովրդական ժողով սլավոնական ցեղերի մոտ
զ. եկեղեցու իրավասությունից դուրս գտնվող միջնադարյան դպրոց

1) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ե, 5-բ
2) 1-դ, 2-ե, 3-ա, 4-գ, 5-գ
3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ, 5-զ
4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ, 5-դ

**57** **Բերված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են փարավոն Մինայի կողմից միասնական պետության ստեղծման հետևանք.**

ա. Եգիպտոսի պատմության մեջ սկսվեց Նոր թագավորության դարաշրջանը:
բ. Նոմերի միջև պատերազմները դադարեցին, տնտեսությունը վերականգնվեց:
գ. Նեղոսի դելտայի շրջանում կառուցվեց միասնական պետության նոր մայրաքաղաքը՝ Մեմֆիսը:
դ. Անցկացվեցին կրոնական բարեփոխումներ, որոնք սահմանափակում էին Ամոնի տաճարի քրմության իրավունքները:
ե. Իրականացվեցին առաջին ռազմական արշավանքները Լիբիա,Նուբիա և Սինայի թերակղզի:

1) ա,գ,դ
2) բ,դ,ե
3) ա,բ,դ
4) բ,գ,ե

**58** **Նշված փաստարկներից ընտրել 5-ը, որոնք հանդիսանում են Իվան IV Ահեղի գործունեության հետևանք.**

ա. Վերջնականապես տապալվեց Ոսկե Հորդայի տիրապետությունը:
բ. Հրավիրվեց ռուսական դասային ներկայացուցչական առաջին ժողովը:
գ. Ստեղծվեցին կառավարման համապետական մարմիններ՝ պրիկազներ:
դ. Ռուսական պետությանը միացվեցին Մերձբալթիկան, Լեհաստանը և Ուկրաինան:
ե. Մտցվեց զինվորական ծառայության նոր կարգ:
զ. Ռուսական պետությունը կորցրեց Մերձսևծովյան տարածքները:
է. Ռուսական եկեղեցին դարձավ ինքնուրույն՝ չենթարկվելով Կոստանդնուպոլսի պատրիարքին:
ը. Ռուսական պետությանը միացվեցին Կազանը, Աստրախանը և Արևմտյան Սիբիրը:

1) ա,դ,ե,զ,է
2) բ,գ,դ,զ,ը
3) ա,դ,զ,է,ը
4) բ,գ,ե,է,ը